



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿՆԵՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 2 Սեպտեմբերը Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին յաջորդող չորրորդ Կիրակին է:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող հոգեւոր իր պատգամը:

## **PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. SARKIS CHURCH IN PASADENA**

Sunday, September 2<sup>nd</sup> is the fourth Sunday following the Feast of the Assumption of the Holy Mother of God. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at St. Sarkis Church in Pasadena. The Prelate will also deliver the sermon.

## **ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 92ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐԻՆԷՔ ՖՐԵՉՆՈՅԻ ՄԷՋ**

Կիրակի, 2 Սեպտեմբերին, Ֆրեզնոյի մէջ, Մուսա Լերան հերոսամարտին 92րդ տարեդարձին առիթով, տեղի պիտի ունենայ Ս. Պատարագ, մատաղօրհնէք եւ տօնակատարութիւն:

Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Արժ. Ս. Խորէն Ա. Զիւլ. Հապէշեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ, եւ մատաղօրհնէքի արարողութիւն պիտի կատարէ Ֆրեզնոյի Police Association's Training Grounds-ին մէջ:

## **COMMEMORATION OF THE 92<sup>ND</sup> ANNIVERSARY OF THE BATTLE OF MOUSA DAGH**

On Sunday, September 2<sup>nd</sup>, the Mousa Dagh Compatriotic Union will commemorate the 92<sup>nd</sup> anniversary of the heroic battle of Mousa Dagh with Divine Liturgy, *madaghorhnek*, and various festivities. The commemoration will take place at the Fresno Police Association's Training Grounds.

The Prelate has delegated Archpriest Rev. Khoren Habeshian to celebrate Divine Liturgy and preside over the blessing of madagh.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԿԱՏԱՐԵՑ ԳԵՐՇ. Ս. ՎԱՅԷ ԱՐՔ. ՅՈՎՍԵՓԵԱՆԻ**

Երեքշաբթի, 28 Օգոստոսին, Առաջնորդ Սրբազանը այցելեց Կլենտոյլի Adventist հիւանդանոցը, իր բարեմաղթութիւնները փոխանցելու եւ աղօթելու Գերշ. Ս. Վաչէ Արք. Յովսեփեանի, որ անցեալ շաբաթվերջին ենթարկուած էր սրտի վիրաբուժութեան:

Առաջնորդ Սրբազանը շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն մաղթեց Վաչէ Սրբազանին, որ իր կարգին շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին եղբայրական այս վերաբերմունքին համար:

Առաջնորդ Սրբազան Յօր կ'ընկերանային Թեմիս Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի զոյգ վարիչները՝ Գերպ. Ս. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգշ. Ս. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան:

Յայտնենք, որ քանի մը շաբաթ առաջ, Վաչէ Սրբազան անձամբ այցելած էր Ազգ. Առաջնորդարան, շնորհաւորած էր Առաջնորդ Սրբազանը իր կատարած մեծ ներդրումին համար, կառուցանելով Ազգ. Առաջնորդարանի գեղակերտ շէնքը, եւ յաջողութիւն մաղթած ապագայ բոլոր ծրագիրներուն:

## **PRELATE CONVEYS WELL WISHES TO H.E. ARCHBISHOP VATCHE HOVSEPIAN**

On Tuesday, August 28, the Prelate visited H.E. Archbishop Vatche Hovsepian at Glendale Adventist Hospital to wish him a quick recovery and good health following heart surgery. Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian accompanied the Prelate.

A few weeks ago, Archbishop Hovsepian had visited the Prelacy to congratulate the Prelate on the new headquarters and wish success in all future endeavors.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ ԻՐԱՆԱՅԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԵՂՐՈՆԻՆ ԶԻՄՆՕՐԶՆԷՐԸ**

Չորեքշաբթի, 29 Օգոստոսը պատմական օր մը եղաւ Լոս Անճելըսի Իրանահայ Միութեան համար, որուն Վարչութեան նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ միութեան նոր կեղրոնի հիմնօրհնէի արարողութիւնը: Նոր կեղրոնը պիտի կառուցուի Կլենտոյլի մէջ:

Հիմնօրհնէի արարողութիւնը կատարեցին Թեմիս բարեխնամ



Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, Էջմիածնական Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտրեան, մասնակցութեամբ երկու Թեմերու հոգեւորականաց դասերու ներկայացուցիչներու:

Առաջնորդ Սրբազան Զօր կ'ընկերանային Թեմիս Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի զոյգ վարիչները՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին եւ Էսսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցիներու հոգեւոր հովիւները: Ներկայ էին Կլենտէյլի քաղաքապետ տիար Արա Նաճարեան, ինչպէս նաեւ բարձրաստիճան այլ անձնակազմիներ:

Զիմսօրիներէի աւարտին, Առաջնորդ Սրբազանը խօսք առաւ եւ իր բարեմաղթութիւնները փոխանցեց Միութեան Վարչութեան եւ յաջողութիւն մաղթեց կառուցուելիք շէնքի աշխատանքներուն:

Արարողութենէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն Brandview Collection սրահին մէջ:

## **PRELATE OFFICIATES OVER THE GROUNDBREAKING CEREMONY OF THE NEW CENTER OF THE ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES**

On Wednesday, August 29<sup>th</sup>, the Armenian Society of Los Angeles celebrated a milestone with the blessing of the foundation for their new center in Glendale. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, officiated over the ceremony with the participation of clergy members. Among the invited guests in attendance were Glendale Mayor Ara Najarian and elected officials.



Accompanying the Prelate were Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, as well as pastors of St. Mary's Church and Holy Martyrs Church.

Following the service, the Prelate conveyed his best wishes to the association and wished them success in

their upcoming project. A reception followed at Brandview Collection.

**ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԻԹՈՎ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԱՏԳԱՍ ՄԸ  
Կ'ՈՐԴԴԷ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ  
ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐՈՒՆ**

Ամառնային դադարէ ետք, մեր Ազգ. Վարժարանները իրենց դուռները պաշտօնապէս կը վերաբանան այս շաբաթ, ընդունելու համար մանկամտուրէն մինչեւ երկրորդական կարգի աշակերտներ, հայկական մշակութային ասանդներով եւ առողջ մթնոլորտի մէջ դաստիարակելու մեր նորահաս սերունդը:

Ազգային վարժարանները Չորեքշաբթի, 5 Սեպտեմբերի առաւօտուն պաշտօնապէս պիտի վերաբանան իրենց դուռները եւ ուսումնական 2007-2008 տարեշրջանը սկիզբ պիտի առնէ:

Առաջնորդ Սրբազան Զօր եւ Թեմիս հոգեւոր հայրերու առաջնորդութեամբ, ու համաձայն մեր Թեմի ասանդութեանց, վերամուտը պիտի կատարուի աղօթքով եւ բացման արարողութիւններով:

Այս առիթով, հոգեւոր հայրերը տնօրէնութեանց, կրթական մարմիններուն, ուսուցչական կազմերուն եւ աշակերտութեան պիտի փոխանցեն Առաջնորդ Սրբազանին օրհնութիւնն ու յառաջիկայ ուսումնական տարուան մասին անոր պատգամը:

**PRELACY SCHOOLS PREPARE TO COMMENCE  
THE NEW ACADEMIC YEAR**

On Wednesday, September 5, Prelacy schools will officially commence the 2007-2008 academic year with the traditional opening ceremonies.

The ceremonies will include prayers led by our pastors who will also convey the Prelate's blessings and message to the principals, staff, and students.